

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռ.
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՂԱՔՆԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զիջումը և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՏԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն Գրականության Կոլեգիայի մոտ):

Կայտարարութեան ուրիշ բաղադրանքները «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիտնել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան նկարչների պատկերահանգէսը.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ ընտանիքը. Նամակ
Շուշուք. Ներքին լուրերը.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արտաքին լուրերը.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐԱՆԵՐ.
ՆԵՐ.—ԲՈՐՈՒՄ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. «Ամուսնանք»:

ԿՈՎԱՆԻԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՆԳԵՍԸ
ԴԵՐԸ

III

Ինչ որ ներքին է նկարչութեան մէջ մի
սկզբնային անհրաժեշտ է, որ իրենց անունը
—նոյնը ներքին է մի մասնագետ նկարչին:
Ինչ որ ներքին է, դիտելով Յակոբեանի պէս
սկզբնային անհրաժեշտ է, որ ինչքան էլ բնածին,
աչքի ընկնող ձիւղեր ունենան, այնու ա-

մենայնիւ սկսող, աշակերտ լինելով, հանգէս
է դրել «Փառքի տաճարում» իր ամեն
տեսակ էտիկէտները, — և մտախոյզ պատ-
կերներ և ձիւղանկարներ, և տեղական տի-
պեր, և ժանր, և տեսարաններ, քանի որ
ինքն զեռ ևս չէ որոշել թէ ժամանակով
ինչ ձևի նկարիչ պիտի դառնայ, —նոյնը,
կրկնում ենք, ներքին է անկող մասնագետ
իրանց համարող նկարիչներին:

Այդ է պատճառը որ վերջիններից շա-
տաւոր ստեղծագործութիւնների մէջ նկատ-
վում են խոշոր պակասութիւններ և ան-
կատարելութիւններ...

Մարդ էր օսում, օրինակ, նկարում է և
պէտքովս էր և ծագելներ, — և այն-
չը տատանվում է անկող թէ մշակել շարու-
նակելով նկարչութեան այդ երկու ժանրնե-
րից մէկը, նա ո՞րի մէջ պէտք է աւելի ա-
ռաջագէտ լինելու: Նրա «Հրեհ» Բալթա-
նի նաւթահանքում» (№ 110) շատ ա-

ջողված է, բայց նրա «Հրեհ» անտառի»
մէջ (№ 18) մեծադիր պատկերը տափակ
է, բլրիկի շուրհի, զուրկ է խորութեան, հե-
ռաւորութեան յատկութիւններէ:

Գաբաշվի բոլոր պատկերներից միակ
ճշմարիտ աշողվածը «Նեղրի» մեծադիր
կենդանագիրն է (№ 30), որն ունի և բը-
նականութիւն, և դէմքի որոշ արտայայ-
տութիւն, նեղրին յատուկ խորամանկ վայ-
րենի ժպիտը, նկարված է բնականին հա-
մեմատ ներկերով, և վերջապէս նրա մէջ
պահպանված է ստուգանքների ճշգրտութիւնը:
Եւ դիտելով ինչի է աշողվել Գաբաշվին այդ
պատկերը, — որովհետեւ նա բնութիւնից,
կենդանի մարդու դէմքից է նկարել այդ
պատկերը: Ուրեմն թող էլ միշտ սահմա-
նափակվել նկարչութեան այդ ձևով և ա-
ռաջ դնայ... Բայց ոչ, նա զբաղվում է բա-
ւականանում, և իր ուրիշ պատկերներում
նա ջանում է արդէն ոչ թէ բնութիւնից,
կենդանի մարդկանցից արտանկարած
առանձին տիպեր ներկայացնելու, այլ
այնպիսի տիպեր, որոնք իր երեւակայու-
թեան ծնունդ են, և շրջագոտում է նը-
րանց բնութեան տեսարաններով: Եւ ահա
ինչ է լինում դրա հետևանքը. նրա «Բա-
ղարը գիւղում» (№ 38) այլ ևս լուրջ գե-
ղարուեստական ոչ մի կրտսիկային չէր
դիմանայ: Այդ պատկերը, զուգահեռ աւարտ-
ված է, բայց այնպէս, ինչպէս նա այժմ
կայ, նա հետեւելով խոշոր պակասութիւն-
ներին, ունի. որովհետեւ նկարիչը այդ իր
պատկերի տիպերը երկի բնութիւնից է
նկարել, այլ իր երեւակայութեամբ է լրա-
ցրել: Նկարի աջ կողմի ձմեռուկների առջև
նստած գիւղացիների խմբի վերջին գիւղա-
ցին այնպիսի երկար դանակ ունի, որ թէ
նրան վերկայցնէր ու կանգնեցնէր, նա իր
հասակով գուցէ երկու անգամ աւելի բար-
ձր կը լինի քան թէ միւս մարդիկ, որոնք

կանգնած դրութեան մէջ են նկարված:
Նոյն պատկերի գետնի գոյնը առտնին պը-
լանում և պատկերի խորութեան մէջ՝ կա-
տարելապէս նոյնն է, որ ի հարկէ անբնա-
կան է: Ապա կատարելապէս նոյն կանաչ
ներկով են ներկված և ձմեռուկները պատ-
կերի առաջին պլանում, և պատուհանների
վրա փռված շորի կտորները երկրորդ պլա-
նում, և վերջապէս կանաչագորգ սարը
պատկերի խորութեան մէջ: Այլ ևս եր-
կին վրա չենք խօսում. նա երեւի նոյն
իսկ նկարչի կարծիքով աւարտված է,
քանի որ կապոյտ ներկի տակ տեղ տեղ
ոչինչ ներկով չը ծածկված սպիտակ կտաւի
գծեր են երևում... Վերջինսը այժմ՝ նոյն
նկարչի կատարելապէս աւարտված նկարը,
«Կուժ տանող աղջիկը» (№ 57), որից շա-
տաւոր այդքան հիացած են, — և ի՞նչ ենք
տեսնում: Այդտեղ նկարիչը ապացուցա-
նում է որ նա զուրկ է «Farbensinn»
ասված զգացմունքից. աղջկա զգեստը և
գետնը, որի վրա նա կանգնած է, նկարե-
լու համար փորձ է արժանի մի և նոյն
ներկը. կարմրագոյն երկնքի և կնոջ դէմքի
գոյնը կատարելապէս նոյնն է, չը նայելով
որ կինը մէջքը շուտ տուած է կանգնած
դէպի արշալոյսը, կամ արեւի մայր մտնելը
(չը գիտենք երկուսից որն էր ուղեցել
ներկայացնել նկարիչը): Փորձեցէ՛ք հեռա-
նել կնոջ գլխի վրայից աղջկա և նրա
դէմքի համար շրջանակ կազմող մազերը,
— և կը համոզվէք որ կնոջ դէմքը գոյնի
կողմից կարմրագոյն երկնքի շարունա-
կութիւնն է միայն: Այնուհետեւ զգեստի
մի մասը կազմող սպիտակ շաշկիք ունի
մի կատարելապէս անբնական գոյն. միջէ
արշալոյսի, կամ արեւի մայր մտնելու, վեր-
ջապէս ցերեկվայ ջերմ և կարմրագոյն լոյսի
ժամանակ, սպիտակ կտաւը կարող է կրել
այն սպիտակ արծաթ փայլ գոյնը, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

„ԱՍՈՒՍԻՆԵՐ“

Կիւմուրի չորս գործողութեամբ, հեղինակութիւն
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆԻԿԱՆԵԹԻ

Նախ պիտայի կարծաւոտ բովանդակութիւ-
նը:

Արկաղի Սամսոնեան, նշանաւոր պաշտօնայ,
վերին աստիճանի անաղիւ և անբարոյական
մարդ է: Նա և կաշառակեր է, և կանանց ետե-
ւից ընկնող է, և ստակոս է, և քէֆ անող է, —
վերջապէս նրա մէջ ամբողջութեամբ են մարդկային
բոլոր խոշոր և աննրբի արատները: Մարգարիտ,
նրա կինը, որին ծնողները երեխ աղջկա կամքին
հակառակ են պսակել այդ անբարոյական, բայց
զերբ և հարստութիւն ունեցող մարդու հետ,
զիտէ իր մարդու բոլոր արատները, — և այդ
պատճառով դժբաղը է: Սկզբից Մարգարիտը
շատ բան միայն կասկածում է, բայց հետզհետեւ
աւելի և աւելի է համոզվում մարդու վերին ա-
տիճանի անաղիւ կեանքի մասին... Ինչ կին է
լինի, — լինի զա իր ստորագրեալի կինը, էլ ի՞նչ
Մաստակեան, թէ հարուստ որբայրի վարդուհի
վարդուհեան, թէ իր տանը ժամանակաւորապէս
հիւրասիրված վարժուհի, օրիորդ Հեղինէ, թէ
վերջապէս Սէփի աղախինը, — Արկաղի պատրաստ
է նրանցից ամեն մէկին հաւատացնել թէ գովա-
ծի պէս սիրում է նրան, և բացի նրանից ոչ որքին
չէ սիրում: Իր ստորագրեալ Արեւ Մաստակեանի կի-
նը արդէն Արկաղի սիրուհի է, բայց այդ չէ ար-
գելում նորին գերազանցութեանը, իր սեփական
տանը, գիշեր ժամանակ բերել տղամարդու չո-

բերով հագնված և ուրիշ կանանց. դրանով չը
բաւականաւոր, նա զեռ ստիպում է իր կնոջ,
որ սա իր ձեռքով թէյ պատրաստի և ուղարկի
իր կարիքները, իբր թէ արտասահմանից եկած
վաղուց չը տեսնված երիտասարդ բարեկամներին
հիւրասիրելու համար:

Մարգարիտը զիտէ իր մարդու անաղիւ կեան-
քը, զանգատվում է այդ մասին իր հին բարեկա-
մուհուն, օրիորդ Հեղինէին, որը գաւառներից
Թիֆլիս գալով, ժամանակաւորապէս բնակվում է
Մարգարիտի տանը, զիտէ և զանգատվում է, —
բայց տանում է դժբաղդութիւն և խոնարհ-
վում է իր վիճակին: Սակայն մի օր նա այլ
ևս չէ համբերում... Մի կողմից նրա գերազանց
ամուսինը, նոյն իսկ իր աչքի առջև, սալոնում,
յանդգնաբար հանում է էլիզաբի պայուսակից ի-
րան ուղղված մի սիրահարական տոմսակ և
շտապով գրպանն է դնում, յուսաւոր որ Մարգա-
րիտը այդ գործողութիւնը չի նկատի, — իսկ միւս
կողմից նոյն Արկաղի իրան իրաւունք է համա-
րում ամենակոպտ կերպով նախատել իր կնոջը
անբարոյականութեան մէջ, որովհետեւ Մարգարի-
տը, շատ տարիներից յետոյ հանգիստելով իր ման-
կութեան բարեկամին, Արտաշէս Արամեանին,
բարոյական վայելչութիւն է գտնում իր այդ աղ-
ջիկ բարեկամի ընկերութեան մէջ: Արտաշէսը,
համալսարանի ուսումն աւարտելով, իմանում է
որ Մարգարիտը պսակվել է, այն Մարգարիտը,
որին նա պատանեկութեան, գուցէ դեռ մանկու-
թեան ժամանակից ջերմ կերպով սիրելիս է եղել,
— և նա մտնում է զինուորական ծառայութիւնը
միմիայն այն նպատակով, որ պատերազմում մահ
ընդունի: Բայց իր սրտում խոր արմատներ գը-
ցած սէրը չէ տանում նրան դէպի մահ, այլ գոր-
ծել է տալիս նրան քաջութիւններ պատերազմի
դաշտում:

Եւ ահա, այժմ, երբ անաղիւ Արկաղի նը-
կատում է որ իր կինը մեծ վայելչութիւն է

գտնում Արտաշէսի հասարակութեան մէջ, նախ
որպէս մանկութեան ընկերոջ, ապա որպէս հայն-
րի մէջ յայտնի և հայ ինտելիգենտ ընկերցող չըլա-
նից սիրված վիպագրողի հասարակութեան մէջ,
—նորին գերազանցութիւնը, ինքն փչացած, ինքն
բարոյապէս ապականված լինելով, ինչպէս ա-
սում են, ուրիշներին էլ իր շափով է չափում...
Նա պարզ կերպով ակնարկում է կնոջ և նրա
բարեկամ օֆիցերի մէջ սիրային յարաբերու-
թիւնների մասին, նա ինքն իրան ամեն բան ներե-
լով, ոչինչ չէ ներում իր կնոջը, սխտում է ամե-
նակոպտ, անվայել կերպով իրաբերելով դէպի
կինը, և վերջապէս այնտեղ է հասնում, որ զան-
գակ տալով, կանչում է տան բոլոր ծառաներին
և կնոջ ներկայութեամբ հրամայում է նրանց այլ
ևս երբեք ներս չը թողնել բազմալիս իր սը-
պային...

Կինը, որը մի բազմալիս հաւատացած
էր որ ինչքան էլ լինի Սամսոնեան, այնու
ամենայնիւ այդ տեսակ լրութեան չի հասնի, —
այժմ մարդու բարձրագոյն հրամանը լսելով՝ գու-
նատ, մահվան դատապարտվածի պէս կանգնած
է, լսելով իր դատաւիճիչը: Բայց այնու ամենայ-
նիւ նա ունի այնքան հոգու ներկայութիւն, այն-
քան բարեկիրթ տա կտ, որ անմիջապէս դիմ-
ելով ծառաներին աւելացնում է.

—Այն, կատարեցէ՛ք պարոնի հրամանը, ես էլ
նոյնն եմ հրամայում ձեզ, գնացէ՛ք...

Եւ ապա, հէնց որ ծառաները հեռացան, նա
դիմելով մարդուն ասում է.

—Իսկ հիմա, պարոն Սամսոնեան, ես այլ ևս
ձեռ կինը չեմ...

Մարգարիտը հեռանալով մարդու տանից, ըս-
կում է ապրել իր աշխատանքով, նկարչու-
թեամբ, որի մէջ նա շատ հմուտ է: Նա ապրում
է առանձնացած, ամենքի աչքից ընկած, միշտ
մարդը լվլվում է հարստութեան, քէֆի, զուար-
ճութիւնների մէջ: Մարգարիտը աշխատում է իր

աշխատանքով է ապրում, քաջքնելով իր անյուստի
կեանքը... Նրան աշողվում է միայն իր երկու
բարեկամներին՝ գիւղատնտես Լևոն Շիրակեանին
և որը աղջիկ, վարժուհի Հեղինէին՝ բաղաւա-
րացիներ, պսակելով այդ սիրահարված գոյգը, ո-
րին կապում է, բացի սիրոյ զգացմունքից, նա-
նապէս և հասարակաց օգտին, գիւղական տարրի
շահերին՝ ձեռք ձեռքի տուած ծառայելու բարձր
իդէալը, —բայց իր սեփական բազմ ձեռք բերե-
լու Մարգարիտին չէ աշողվում: Միայն հիմա, Ար-
տաշէսի հետ նորից տեսնվելով, երբ նա իրան
բարոյապէս ազատ և անկախ է դրում, Մարգա-
րիտը խոստովանվում է թէ սիրում է նրան ան-
վերջանալի, ջերմ, անսահման սիրով, սակայն ա-
ւելացնում է թէ «պատրաստ է իր կեանքը նրան
զոհել, բայց չի զոհի նրան իր պատիւը»: Մարգա-
րիտը անձնատուր կը լինի Արտաշէսի միմիայն
այն ժամանակ, երբ օրինական ճանապարհով
ձեռք բերած լինելով իր ազատութիւնը, կը կա-
րողանայ, առանց հասարակաց կարծիք վիրա-
ւորելու, առանց օրէնքի դէմ գործելու, ապա-
հարգանք ձեռք բերի — օրինական կերպով ամուս-
նանալ իր սիրելիի հետ, նրա հարադատ կինը
դառնալ...

Յաղթող հանդիսանալու համար նրանց երկու-
սին հարկաւոր է այդ դէպքը, — և պիտան էլ վեր-
ջանում է Արտաշէսի խօսքերով.

«Ես կերթամ և կը վերադառնամ քեզ մօտ,
անգին Մարգարիտ, միմիայն այն ժամանակ,
երբ մեր ազատութեան զէնքը ձեռք բերած կը
լինեմ...»

*

Թատրոնի անցքերում Սունդուկեանցի պիէսա-
յի ներկայացման ժամանակ, ամեն տեսակ խօ-
սակցութիւններ և դատողութիւններ դիպան ա-
կանջիս: Դատարն էլ ինչ էին դիմում այլ և այլ
հարցմունքներով...

«Միջ» հայաց կեանքում գոյութիւն ունեն

ԲԵՆԴԱՐԱՆ, 1 փետրվարի «Ողբեր» շաբաթ կա-
կանում է, որ բոլորական դառնալով ինքն
Ստամբուլի սարքած լինել և վաճառատու ան-
ձինքն իրենց ազատություն համար ընտրություններից
առաջ երկրի մէջ տեղի տարածելու նպատակով
Սերբիական օսմանագրի քաղաքներն եկած
բոլորականը պատմում են, որ կոստանդնուլի և Բա-
ղամիսի արանքում ընդհարում պատահեց ազգա-
բնակչության և իշխանության մէջ, որ ձերբա-
կալութիւնները շատ յուզում են երկրի բնիկ
ՎԻԵՆԱ, 1 փետրվարի լուրերին նայելով,
պրինց Ալեքսանդր Բատուրնիցը չուտով առա-
տրական ծառայութեան մէջ կը մտնի: Պրինցը
ուղևորվեց Բուդապեշտ, որտեղ կը տեսնուի կայ-
սրի հետ՝ մասնաւոր ունկնդրութեան ժամանակ:
ՊԱՐԻՉ, 1 փետրվարի: Երէկ երեկոյանից Օր-
լէանի դուքսը ուրիշ բանտարկվածներին հաւա-
սար պայմաններին մէջ է դրված, բացի կերակ-
րից: Նրա խնդրելի համեմատ, նրան իրաւունք
ունեն այցելելու միայն 18 հոգի, որոնցից 7-ը
նրա ազգականներն են: Բողոքալիքը տալու հա-
մար որոշված 10 օրվայ ժամանակամիջոցը անց-
նելուց յետոյ, հաւանականաբար, նրան կը տե-
ղափոխեն Լազարի բանտը: Հիւսիսային դեպար-
տամենտում ենթադրում են, որ նախագահը կը
ներք պրինցին, միմիայն որոշ ժամանակամիջոց
առանձնուց յետոյ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ
Փետրվարի 1-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ — 91 ր. 90

Բերլինի վրա 100 մարկ —	44	80
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36	50
Ռուսի — արծէ —	7	32
Մաքաւիլի կուպոններ —	146	25
Արծաթ — — —	1	8
Բորսային դիսկոնտո —	6	70
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 100 —	—	—
— — — 2-րդ —	99	87
— — — 3-րդ —	99	75
— — — 4-րդ —	99	75
— — — 5-րդ —	99	75
— — — 6-րդ —	99	75
6% ոսկեայ բէնտա —	163	75
4% ոսկեայ փոխառութիւն —	139	50
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. —	100	12
— — — 2-րդ —	100	50
— — — 3-րդ —	—	—
Ներքին 5% առաջին փոխառութիւն —	240	—
— — — երկրորդ —	229	—
— — — երրորդ ագն. կալ. բ. —	218	75
Պետ. երկաթուղային բէնտա —	99	87
5 1/2% բէնտա —	103	25
4% ներքին փոխառ. —	85	87
5% գրաւ. թղթ ագն. կալ. բանկի. —	99	62
4% վկայակ. գիւղ. հող. բանկի. —	103	62
4 1/2% գրաւական թղթեր կալուած. —	—	—
— — — փոխ. կրեդ. ընկ. մետաղ. —	136	50
— — — թղթաղ. —	94	75
Պետերբուրգի քաղաքային կրեդ. —	—	—
ընկ. օրիգինալներ —	96	12
Մոսկուայի քաղաք. օրիգինալներ. —	95	—
Օդէսայի — — —	96	25
Թիֆլիսի — — —	—	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. —	—	—
— — — Բուխարայի — — —	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը —	—	—
ամուր է:	—	—

Խաբազիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԱՆԻՐՆԵՐ ԵՎ ԲԱՂԱՆԻՐՆԵՐ, որ գտնուում է Ալեք-
սանդրովսկի փողոցում՝ վաճառում է կալուածատէրը 12,000. լուբրիկ թէկ 30,000
լուբրիկ ալեքս. արծէք ունի: Տունը երկու յարկանի է: Ճակատին երկարութիւնը
13 1/2 սաժէն է. լայնութիւնը՝ 12 սաժէն, բայց այս շինութեան քարուկրայ 4
պատերն են պատրաստի, որոնք հիմքից մինչև ի վեր 3 սաժէնից փոքր ինչ աւելի
բարձրութիւնը ունին, բոլոր շինութիւնը 50 պատուհանից է բաղկացած 4
կոլոնի յատուկ սենեակներով և քնարձակ դաւիթներով: Շինութիւնն երկու
առանձին ճանապարհներ ունի, երկթեւան մեծադիր դռներով, ունի նաև մի պտղա-
տու գեղեցիկ պարտէզ, որը 20 տեսակ աղիււ մրդեր է բերում: Բացի սրանից՝ ունի
նաև մի քարուկրայ գմբէթաձև նորաշէն բաղանիք: Թէ տունը, բաղանիքը, և թէ
պարտէզը՝ 620 սաժէն քառակուսի տարածութիւն ունի: Պարտիզի հարաւային
պատերն քարուկրայ են: Բաղանիքն առանձին ճանապարհով շինված է պարտիզի
հարաւային կողմի, որ և բաղկանում է 3 համարներից, մի վանապու. ունի իր
համար. քարուկրայ (կարիդոր) միջնադաւիթ. և մի փայտաշէն հանգստարան (բուֆէտ)
երկարկանի: Բաղանիքը 7 սաժէն երկարութիւն և 5 սաժէն խորութիւն ունի, գետին
ունի ընդհանուր (օրաշի) բաղանիքի համար, որի քարուկրայ պատերն շինված են 3
սաժէն բարձրութեամբ: Զրի ապագայ պատրաստութեան համար՝ շինված է նաև մի
աւազան պաղ ջրի համար 1 1/2 սաժէն բարձրութեամբ 4 սաժէն երկարութեամբ և
սաժէն 1 1/2 լայնութեամբ: Բաղանիքի հարաւային կողմն է իր սեփհական ջուրն,
որ բղխում է լաշի-խէի ձորակից, շատ առողջարար և համեղ, որի մաքուր հոսանք-
ներն՝ առանձին ջրանցքով մտնում են պարտէզ և պարտիզից գնալով մինչև դրան
ձակաւոր՝ զովանում է բնակիչներին սրբատաշ քարերով շինված աղբիւրի միջով: Տու-
նը, բաղանիքը և պարտէզը ունեն վաւերական հաստատուն կուպէջայ. զանազ. կա-
տարողական թերթ և պլանֆապսադ (յատակագիր):
Գնել ցանկացողներն կարող են ուղղակի դիմել վերոյիշեալ պ. Դաւթեանցին:

1—3

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍՏԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Ուրբաթ, 9/21 փետրվարի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ «MANCHE» (ՄԱՆՇ) շոգե-
նաւը նաւապետ CAUVIN (ԿՈՎԵՆ), դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հալլը և Լոնդոն, մտնելով
և միջանկեայ նաւահանգստները:

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄԻՍՏ պ. Գ. ԷՍՍԷՆՃԵՐ, ԹԻՖԼԻՍԻՍՏ ԳԵՐՈԳ ՀԵՃՈՒՐԵԱՆ
ՀԵՃՈՒՐԵԱՆՑ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍՏ:

1—2



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՏԻԱՏԿՈՎՍԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ունի փոստի, գրելու, գրեթէ, քաղաքների, ծխախոտի գոյնաւոր, կաշմի և ուրիշ
տեսակ թղթեր. ծախվում են գործարանի գնով կան նոյնպէս և մեծ քանակութեամբ
գրելու պարագաներ:

ԹԻՖԼԻՍ. Կիւրորդայա փողոց. Ագնական կալուածական բանկի շինութեան մէջ:

6—20

ՍԼԱՆԻ ՎԱՆՔՈՒՄ ՆՈՐԱԿԱԳՄ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՆ ԶԲԵՐՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՆԱԿԱՍՏ ԵՎ ԱՅԼ
ՆԵՐՆԵՐ Ուղղակի ցանկացողներին խոնարհաբար խնդրում ենք դիմել այս հասցեով.
Ст. Еленова. Эр. губ. Архимандриту Вагану Кеворкянц.

1—5

ՀՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆ

„Ս. Ա. Բ. Դ. Ա. Փ. Ո. Ի. Ն. Զ.“

ԿԱՍ

ԻՍ ԵՒ ԻՄ ՍԱԶԸ

Բանաստեղծութիւնների II հատոր:

Գինը մէկ լուբրի: Դիմել հեղինակին՝ Черезъ Прасковью въ гор. Св.—
Креста. Семену Балаевичу Сафарянцу.

1—2

Անհրաժեշտ եմ համարում հրապարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԿԿԱՍՊԵԱՆ ԵՐԿԻ ՊԱՏ-
ԻՆԼԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ մեր կոմիտիական գործն, որ սկսված է 1883 թվից շարունակվում
է: Դարձեալ սովորականի համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանա-
լու ու ծանկեղու հետեւեալ քաղաքներն. ՈՒԶՈՒՆ—ԱԿԱՑ, ՂԱՆԴԱՎԱՅԻ, ԱՍԽԱԲԱԹ, ՄԵՐՎ, ՉԱՐՅՈՒՆ,
ԱՍԽԻԿԱՐԱՑ, ԲՈՒԽԱՐԱ, և ՍԱՄԱՂԱՆԻ, որտեղ և ունեմ կանտորներ, նոյնպէս և ԲԱԳՈՒՆ:
Նաև կատարում եմ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատվերներ:
Ցանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցեով. ՄՅՄԻՆ-ԱԴԱ—ԱԼԵ-
ԵՐԿՍ ՆԱԶԱՐՈՎ.

10—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԻԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Զորեղաւթի, փետրվարի 14-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւա-
պետ ԺԻԲՈԻՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործադիրներին: Բաթումում տան, Նաբեթեայում, և Թիֆլիսում նախկին Արժուճի
դալիւրեւում, № 114.

1—2

Անհրաժեշտ եմ համարում հրապարակաւ յայտնել ի գիտութիւն մեր ԿՈՎԱՍՍԻ
պատեւելի ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՍՍԿԱՅԻՑ տեղե-
փոխել եմ ՎԱՐՇԱՎԱ, և կարճեալ ընդունում եմ ամեն առեակ յանձնարարու-
թիւններ, մասնաւորապէս ԿԱՇՈՒՆԳՈՐԾ լինելով, առնում եմ և ուղարկում եմ մեր
յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒՆԳՆԵՐ և դրա վերաբերեալ
ապրանքներ: Ծանօթ եմ նոյնպէս զայնատերական և ուրիշ ապրանքների հետ: Իմ
հասցեն. ВАРШАВА, Товмасы ЯРГУЛЯНЦЪ. Перебѣдъ, домъ № 3.

9—20 (Ե. Զ.)



Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ

ՕՊՏԻԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԳԸ

Պաշտի այդպէս դիմաց, անկիւնի մագաղանում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր-
ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրկայի ոսկորից ԱՆԿՈՑՆԵՐ, ՊԵՆՏԵՆՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՆԻ: Թաւորական և դաշտային ԲԻՆՈ-
ՎԼԵՐԻ, ՋԵՐՄԱՍԿԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և
թէ վաճառների համար վերաստեղծված և վկայական ունեցող
ՄԱԿՍԻՄԱՆ ջերմապիւր: Լօրնտի և պէնսէլի համար ոսկեայ,
արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մե-
տաղական թելեր:

Ալիոցներ և պէնսէլներ տրվում են նմանապէս բժշկների
պատուէրով:

Մագաղանում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի
նորոգելու և ապագիների դնելու:

ԳԵՆԵՐԸ ամենաշափաւոր են:

2—50 (2)

ԼՈՒՄԱՅԻ „ԿՈՂՈՊՏՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ“ վեպը վաճառվում է՝ Թիֆլի-
սում—Կենտրոնական գրաքաղաքացւորական և Բազու—Կասպեան գրաքաղաքացւորական:
Գինն է՝ 1 լուբրի: Գիրքը ձեռք բերել ցանկացող օտարաքաղաքայից կարող են դի-
մել և այս հասցեով՝ Тифлисъ, Типографія канцел. Главнаго начальства, Сербско Симоновичу Назарянцу.

10—10 (2)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԵԱՆԻ

(Կուրիա, վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ԲՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲՈՒՇԿԻ ԻՍՍԼԱԿԱՆՆԵՐ—11/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, թոքի ց. և սիֆիլիսի (վիրաբույժ. և ատամնացաւի
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԳՈՍՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒԴԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էկկտոբրապիա):
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցում են մահկաբար ձեռք բերում և Արտաղան:
Վճար—50 Կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԿՈՎՍԿԻ